



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 48

07 Մարտի 2003 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՂԱՔՄԵԽՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի
քաղաքաշինության վարչության կանոնադրությունը /կցվում է/



Վ. ՀԱԿՈՅԱՆ



ՊԱՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԵՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Վ. ՉԱԿՈՐՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԵՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

Կ Ա Ե Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունը /այսուհետ՝ Վարչություն/ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որը և ճարտարապետության, շինարարության, կոմունալ տնտեսության, անշարժ գույքի կադաստրի բնագավառներում մարզպետին վերապահված իրավասության շրջանակներում իրականացնում է տարածքային քաղաքականությունը:

2. Քաղաքաշինության վարչության մեջ մտնում են հետևյալ կառուցվածքային ստորբաժանումները.

- ա/ ճարտարապետության բաժին
- բ/ Շինարարության բաժին
- գ/ Անշարժ գույքի կադաստրի բաժին
- դ/ Կոմունալ տնտեսության բաժին

3. Վարչության լիազորությունները սահմանվում են „ՀՀ քաղաքաշինության մասին“ օրենքով „ՀՀ մարզերում պետական կառավարման մասին“, ՀՀ նախագահի հրամանագրով և ՀՀ գործող մյուս օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

- Վարչությունը իր գործունեությունը իրականացնում է մարզպետարանի և սույն կանոնադրությամբ.
- Վարչության կանոնադրությունը հաստատում է մարզպետը.
- Վարչության մեջ մտնող բաժինների և աշխատողների թվաքանակը հաստատում է մարզպետը.
- Իր վերապահված իրավունքները և պարտականությունները վարչությունը իրականացնում է վարչության մեջ մտնող ստորաբաժանումների միջոցով:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՉԱՐՈՇՎՈՒՅԹՆԵՐԸ

1. Սահմանված կարգով կազմակերպում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմումը:

2. Եախապատրաստում և եզրակացություններ հանրապետության տարածքային զարգացման ու տարաբնակեցման ուղղագծերի և նախագծերի կազմման վերաբերյալ:

3. Սահմանված կարգով առաջարկություններ է նախապատրաստում և ներկայացնում մարզպետին մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխության վերաբերյալ:

4. Իր իրավասության սահմաններում մարզի համայնքներում իրականացնում է քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն՝ /համաձայն ՀՀ-ում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության իրականացման կարգի/, որի մեջ ներառվում են՝ ա/ իրականացվող քաղաքաշինական գործունեության համապատասխանությունը /հողհատկացումները/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, իսկ դրանց փոփոխության կամ քաջակայության դեպքում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին:

բ/ ճարտարապետա-հատակագծային առաջադրանք տալու համապատասխանությանը ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգերին:

գ/ Շինարարության /քանդման/ բուլլոժային առկայությունը և արձան կարգի համապատասխանությունը ՀՀ կառավարության որոշումներին պահանջներին:

դ/ Շինությունները ավարտական ակտերի մեակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության որոշումների պահանջներին:

ե/ Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը և քաղաքաշինական գործունեությանն առջվող այլ գործառույթները:

զ/ Բնտ անհրաժեշտության ստուգումներ են անցկացվում տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա:

5. Մասնագիտական օգնություն է ցույց տալիս համայնքներում հողերի օգտագործման սխեմաների կազմման գործում:

6. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում, մարզպետին վերապահված չհագործությունների շրջանակներում, սահմանված կարգով հանակարգում է կառուցապատումը, այդ թվում՝

ա/ նախապատրաստում և մարզպետին է ներկայացնում շինարարության բուլլոժային, ճարտարապետա-հատակագծային առաջադրանք տալու, շինարարության աշխատանքների ավարտի փաստագրման փաստաթղթերը:

բ/ միջոցներ է ձևեղարկում ինքնակամ շինությունների կանխման, կասեցման և վերազման ուղղությամբ:

7. Մասնակցում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակմանը ՀՀ պետական քույրեով նախատեսվող կապիտալ ծախսերի և կապիտալ ներդրումների շրջանակներում:

8. Մարզպետի հանձնարարությամբ իրականացնում է մարզպետարանի կողմից ՀՀ պետական քույրեի միջոցների հաշվին կատարվող կապիտալ շինարարության և կապիտալ նորոգման պատվիրատուի գործառույթներ:

9. Վերահսկողություն է սահմանում մարզի տարածքում շինարարության բնագավառին վերաբերվող ՀՀ կառավարության, մարզպետի որոշումների կատարման, ինչպես նաև մարզի տարածքում կառուցվող օբյեկտների շինարարության ընթացքի և որակի վրա, անհրաժեշտության դեպքում առաջարկություն ներկայացնում մարզպետին:

10. Նախապատրաստում և ՀՀ պետական զնումների գործակալություն է ներկայացնում կառուցվող և նորոգվող օբյեկտների գնման փաթեթները: Սասնակցում է մրցութային հանձնաժողովի աշխատանքներին:

11. Անհնամայա,, եռամսյակային և տարեկան տեղեկատվություններ է նախապատրաստում մարզի տարածքում ՀՀ պետական քուլջի միջոցներով կատարվող շինարարական ծավալների վերաբերյալ:

12. Սարգսյետի հանձնարարությամբ միջոցներ է ձեռնարկում տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքների վերացման ուղղությամբ:

13. Համայնքների վարչական սահմաններից դուրս տարածքներում անցկացնում է անշարժ գույքի մոնիթորինգ, որի նիման դրու կազմում է համապատասխան տեղեկատվական բանկ և ներկայացնում մարզպետին:

14. Համագործակցում է մարզպետարանի առանձին ստորարաժիներին, մարզի հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների և համայնքների հետ, անհրաժեշտության դեպքում ջուցաբերում է մեթոդական օգնություն:

15. Մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրում է մարզի տարածքում պետական գույքի օտարման, վարձակալությամբ տրման, փոխանակման առանձին գործընթացները և առաջարկություն է ներկայացնում մարզպետին:

16. Սարգսյետի իրավասության սահմաններում և հանձնարարությամբ զբաղվում է պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման գործընթացներով:

17. Ուսումնասիրում և նախապատրաստում է նապի, էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, ջրամատակարարման /խմելու ջրի/, ջրահեռացման և գազամատակարարման հարցերի վերաբերյալ մարզպետի իրավասության սահմաններում առաջարկություններ և որոշումներ ու կարգադրությունների նախագծեր:

18. Սարգսյետի հանձնարարությամբ էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, ջրամատակարարման /խմելու ջուր/, ջրահեռացման, գազամատակարարման խնդիրների լուծման հարցերում օժանդակում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությանը, ապահովում է դրանց համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության հետ:

19. Օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնասիրում է համայնքների կոմունալ սպասարկման և բարեկարգման միճակը և առաջարկություն է ներկայացնում մարզպետին:

ՍԱՐԳՍԵՏՄԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՄԱԿԱՅՄԻ
ՔՎՐԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎՎՐՉՈՒԹՅԱՆ
Պ Ե Տ

Ղ. ԱՆԱՆՅԱՆԻԱՆՅԱՆ